ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐը	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐը	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ինչպե՞ս են կոչվում ինտերվալի հնչյունները:**

1) Հիմնամաս և վերնամաս
2) Հիմք և վերին ձայն
3) Հիմք և գագաթ
4) Հիմնական ձայն և վերին ձայն

2 **Ընտրել ճիշտ տարբերակը.**

«Լադի այս տեսակի հիմնական հատկանիշը առաջին և երրորդ աստիճանների միջև ընկած մեծ տերցիան է»:

1) Մինոր լադ
2) Դիատոնիկ լադ
3) Քրոմատիկ լադ
4) Մաժոր լադ

3 **Ինչպե՞ս է կոչվում աստիճանաբար ուժեղացումը երաժշտության մեջ:**

1) Դինամիկա
2) Դիմինուենդո
3) Կրեշչենդո
4) Սֆորցանդո

4 **Ընտրել տարբերակը, որում ճիշտ են նշված հնչյունի չորս հիմնական հատկությունները:**

1) ուժգնություն, մեղմացում, կրկնում, տևողություն
2) ուժգնություն, բարձրություն, տևողություն, տեմբր
3) ուժգնություն, մեղմացում, սահունություն, տեմպ
4) ուժգնություն, բարձրություն, մեծություն, տեմպ

5 **Ո՞ր շարքում է թվարկված ինտերվալների ճիշտ հաջորդականությունը:**

1) Օկտավա, սեքստա, կվինտա
2) Պրիմա, տերցիա, կվինտա
3) Սեկունդա, տերցիա, կվարտա
4) Կվարտա, սեքստա, օկտավա

6 **Ի՞նչ ձևով կարող են հնչել ինտերվալները և որո՞նք են դրանք:**

1) Երեք ձևով՝ մաքուր, մեծ և փոքր:
2) Երկու ձևով՝ քրոմատիկ և դիատոնիկ:
3) Երկու ձևով՝ մեղեդային և հարմոնիկ:
4) Չորս ձևով՝ պրիմային, կվարտային, կվինտային և օկտավային:

7 **Նշել պոլիֆոնիա հասկացության ճիշտ բնորոշումը:**

1) Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որտեղ գերիշխողը մեղեդին է:
2) Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որտեղ գերիշխողը հարմոնիկ հաջորդականությունն է:
3) Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որտեղ բոլոր ձայներն ինքնուրույն նշանակություն ունեցող մեղեդիներ են:
4) Պոլիֆոնիան բազմաձայնության տեսակ է, որն ունի հոմոֆոն-հարմոնիկ շարադրանք:

8 **Ո՞ր շարքում են ներկայացված ռոմանտիզմի ներկայացուցիչները:**

1) Շուբերտ, Գերշվին, Շոպեն
2) Ռիմսկի-Կորսակով, Բեթհովեն, Բրամս
3) Մենդելսոն, Գրիգ, Շոպեն
4) Վիվալդի, Բախ, Բրամս

9 **Ո՞ր շարքում են ներկայացված բարոկոյի կոմպոզիտորները:**

1) Բեթհովեն, Շտրաուս, Բախ
2) Վիվալդի, Բախ, Հենդել
3) Շուբերտ, Շուման, Շոպեն
4) Չայկովսկի, Յ.Շտրաուս, Գրիգ

10 **Ո՞ր դարում է ձևավորվել դասական սիմֆոնիան:**

1) XVI
2) XVII
3) XVIII
4) XIX

11 **Ո՞ր դարում և ո՞րտեղ է ձևավորվել օպերայի ժանրը:**

1) XVդ, Անգլիա
2) XIXդ, Գերմանիա
3) XVIIIդ, Ֆրանսիա
4) XVIIդ., Իտալիա

12 **Նշել ստեղնային-փողային նվագարանները:**

1) Կլավեսին, դաշնամուր
2) Չելեստա, ֆիսհարմոն
3) Ռոյալ, սպինետ
4) Ակորդեոն, երգեհոն

13 **Ամերիկացի կոմպոզիտոր, «Պորգի և Բես» օպերայի հեղինակ:**

1) Դ.Էլինգթոն
2) Ջ.Գերշվին
3) Լ.Արմստրոնգ
4) Գ.Միլլեր

14 **Ռուս կոմպոզիտոր, «Տրոյկա» ստեղծագործության հեղինակ:**

1) Գլինկա
2) Մուսորգսկի
3) Սվիրիդով
4) Պրոկոֆև

15 **Ո՞ր նվագարանն է բնութագրում գայլին Պրոկոֆևի «Պետյա և գայլը» սիմֆոնիկ հեքիաթում:**

1) Գալարափող
2) Շեփոր
3) Թավջութակ
4) Կլառնետ

16 **Ո՞ր երաժշտական ոճն է միավորել Դյուկ Էլինգթոնին, Չարլի Պարկերին, Բենի Գուդմենին, Արտեմի Այվազյանին:**

1) Ռոք
2) Ջազ
3) Պոպ
4) Ռեպ

17 **Առաջին հայկական ջազային նվագախմբի ստեղծողը:**

1) Ա.Այվազյան
2) Մ.Վարդազարյան
3) Կ.Օրբելյան
4) Ց.Վարդազարյան

18 **Ո՞ր դարաշրջանում է ապրել և ստեղծագործել Ա.Վիվալդին:**

1) Վերածնունդ
2) Ռոմանտիզմ
3) Բարոկո
4) Միջնադար

19 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երգերը Ռոմանոս Մելիքյանինն են:**

1) «Երգ մայրիկիս»; «Վարդը»; «Անձրևն եկավ»; «Ես իմ անուշ Հայաստանի»
2) «Շափաղ կուտաս»; «Մանուկն ու ջուրը»; «Մի լար»; «Ծիտիկի սերը»
3) «Անձրևի երգը»; «Պուտ-պուտիկ»; «Նապաստակի երգը»; «Իմ սիրելի Երևան»
4) «Աշխատանքի երգը»; «Հայաստան»; «Արջամուկը»; «Կովկասի քաջեր»

20 **Ո՞վ է «Ես մեկ ծառ եմ ծիրանի» երգի հեղինակը:**

1) Սայաթ-Նովա
2) Ջիվանի
3) Շերամ
4) Շիրին

21 **Նոր տարվա ո՞ր երգի բառերն են. «Թևին առած տարին այս նոր»:**

1) Խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Ռոբերտ Ամիրխանյանի «Նոր տարվա հանդես»
2) Խոսք՝ Լիպարիտ Սարգսյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի «Նոր տարվա երգ-պար»
3) Խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի «Երգ ձյունանուշիկի և Ձմեռ պապիկի մասին»
4) Խոսք՝ Մկրտիչ Կորյունի, երաժշտ.՝Գեղունի Չթչյանի «Մանուկներն ու Ձմեռ պապին»

22 **Ե՞րբ է ստեղծվել և բեմադրվել «Անտունի»բալետը:**

1) 1967թ.
2) 1969թ.
3) 1971թ.
4) 1975թ.

23 **Նշված բալետներից ո՞րի հեղինակն է կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանը:**

1) «Անմահություն»
2) «Երջանկություն»
3) «Անուրջների լիճը»
4) «Գայանե»

24 **Նշված օպերաներից ո՞րի հեղինակն է կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը:**

1) «Սասունցի Դավիթ»
2) «Ալմաստ»
3) «Ճանապարհորդություն դեպի Էրզրում»
4) «Հերոսուհին»

25 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երգերը ստեղծված են Հովհաննես Թումանյանի խոսքերով:**

1) Արամ Խաչատրյան՝ «Գարուն Երևան»; Երվանդ Սահառունի՝ «Ջա՞ն հայրենիք»; Մարտին Վարդազարյան՝ «Հեքիաթային ճանապարհ»; Սոֆյա Սամվելյան՝ «Արտուտիկ»:
2) Ռոմանոս Մելիքյանի՝ «Պսակ-պսակ»; Աշոտ Սաթյան՝ «Աղբյուրի մոտ»; Աշոտ Սաթյան՝ «Ես իմ անուշ Հայաստանի»; Ռոբերտ Պետրոսյան՝ «Պատգամ որդուս»:
3) Ռոմանոս Մելիքյան՝ «Վարդը»; Ռոմանոս Մելիքյան՝ «Մանուկն ու ջուրը»; Աշոտ Սաթյան՝ «Մարտիկի երգը»; Ազատ Մանուկյան՝ «Աշուն»
4) Միքայել Միրզայան «Մարտ»; Կոմիտաս՝ «Կաքավի երգը»; Ալեքսանդր Հարությունյան՝ «Հայրենիքիս հետ»; Ռոմանոս Մելիքյան՝ «Աշնան երգ»:

26 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երգերը և ռոմանսները ստեղծված են Ավետիք Իսահակյանի խոսքերով:**

1) Արմեն Տիգրանյան՝ «Սև աչերեն շատ վախեցիր»; Հարո Ստեփանյան՝ «Հեյ Արագած»; Ռոբերտ Պետրոսյան՝ «Արարատի ծեր կատարին; Էդվարդ Աբրահամյան՝ «Ես երգիչ եմ»:
2) Ալեքսանդր Սպենդիարյան՝ «Այ Վարդ»; Ռոմանոս Մելիքյան՝ «Ծիտիկի սերը»; Անտոն Մայիլյան՝ «Արևի պես ճիթ անենք»; Միքայել Միրզայան՝«Ջենով Օհանի ափսոսանքը»:
3) Արամ Սաթյան՝ «Կապույտ երազ»; Դանիել Ղազարյան՝ «Ուռի»; Ալեքսանդր Հարությունյան՝ «Ուռենու տակ»; Էդգար Հովհաննիսյան՝ «Էրեբունի-Երևան»:
4) Էդգար Հովհաննիսյան՝ «Հայաստան»; Խաչատուր Ավետիսյան՝ «Մախմուր աղջիկ»; Ռոբերտ Ամիրխանյան՝ «Հայի աչքեր»; Տիգրան Չուխաջյան՝ «Գարուն»:

27 **Նշել ճիշտ տողը, որտեղ Ավետ Տերտերյանի նշված Սիմֆոնիաներում հնչում են ոչ ավանդական, ոչ դասական նվագարաններ:**

1) Առաջին; Չորրորդ; Հինգերորդ; Ութերորդ:
2) Առաջին; Երրորդ; Հինգերորդ; Յոթերորդ:
3) Երկրորդ; Երրորդ; Վեցերորդ; Ութերորդ:
4) Երկրորդ; Հինգերորդ; Վեցերորդ; Ութերորդ:

28 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր օպերաների հեղինակը Հարո Ստեփանյանն է:**

1) «Անուշ»; «Լուսաբացին»; «Չարի վերջը»; «Խորտակում»:
2) «Քաջ Նազար»; «Սասունցի Դավիթ»; «Նունե»; «Հերոսուհին»:
3) «Խաչատուր Աբովյան»; «Սայաթ-Նովա»; «Գիքոր»; «Ալմաստ»:
4) «Զեմիրե»; «Մարո»; «Քաջ Նազար»; «Լուսաբացին»:

29 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր բալետների հեղինակը Էդգար Հովհաննիսյանն է:**

1) «Ձյունե թագուհին»; «Գայանե»; «Անմահություն»; «Դիմակահանդես»:
2) «Անուրջների լիճը»; «Մարմար»;«Սևան»; «Սպարտակ»:
3) «Հավերժական կուռք»; «Անտունի», «Մարմար»; «Երկնագույն նոկտյուրն»:
4) «Երջանկություն»; «Սևան»; «Անտունի»; «Անմահություն»:

30 **Նշել ճիշտ տողը, որտեղ նշված են Կոմիտասի մշակմամբ այն ժողովրդական մեղեդիները, որոնք կիրառված են Էդգար Հովհաննիսյանի «Անտունի» բալետում:**

1) «Անտունի», «Կանչե կռունկ», «Մոկաց Միրզա», «Կարոս խաչ»:
2) «Հո՜յ, Նազան», «Հանիկ նայ», «Դանդան, դանի», «Աղվես»:
3) «Անտունի», 2. «Կռունկ», 3.«Սիփանա քաջեր», 4. «Շուշիկի»:
4) «Շողեր ջան», «Երկինքն ամպել ա», «Մարալ ջան», «Խնկի ծառ»:

31 **Ի՞նչ է դիատոնիկ հնչյունաշարը:**

1) Հնչյունաշարը կազմված է հիմնական, չփոփոխված հնչյուններից:
2) Հնչյունաշարը կազմված է հիմնական հնչյունների քրոմատիկ փոխոխմամբ:
3) Հնչյունաշարը կազմված է հիմնական հնչյունների կրկնակի փոխոխմամբ:
4) Հնչյունաշարը կազմված է հիմնական հնչյունների ալտերացիայով:

32 **Ինչպե՞ս է դիատոնիզմը դրսևորվում հայկական ժողովրդական երգերում:**

1) Միևնույն հնչյունի բարձր և ցածր տարբերակները հաջորդում են միմյանց անմիջականորեն:
2) Միևնույն հնչյունի բարձր և ցածր տարբերակները հաջորդում են միմյանց որոշ ընդմիջումով:
3) Հայկական ժողովրդական երգերում հնչյունների ալտերացված տարբերակումները հանդիպում են քրոմատիկ հաջորդականությամբ:
4) Հայկական ժողովրդական երգերին բնորոշ է քրոմատիզմը:

33 **Ինչպե՞ս են ցած հնչյունները հանդես գալիս հայկական ժողովրդական երգերի հնչյունաշարում:**

1) Ցած հնչյունները հանդես են գալիս կվարտա տարածության վրա:
2) Ցած հնչյունները հանդես են գալիս անկանոն:
3) Ցած հնչյունները հանդես են գալիս տերցիա տարածության վրա:
4) Ցած հնչյունները հանդես են գալիս կվինտա տարածության վրա:

34 **Հայկական ժողովրդական երաժշտության լադերի (ձայնակարգերի) ոչ օկտավայնությունը և դրսևորման տեսակները:**

1) լադի (ձայնակարգի) հնչյունաշարում կրկնվող հնչյուններն ունեն տարբեր ֆունկցիոնալ նշանակություն:
2) ֆունկցիոնալ տեսակետից որոշ հնչյուններ օկտավա տարածության վրա կրկնվում են:
3) օկտավա տարածության վրա տոնիկան ունի նույն ֆունկցիոնալ նշանակությունը:
4) օկտավա տարածության վրա օժանդակ հենակետն ունի նույն ֆունկցիոնալ նշանակությունը:

35 **Նշել ճիշտ տողը, որտեղ սփյուռքահայ կոմպոզիտորների անուններ են:**

1) Միքայել Թարիվերդին; Ժորժ Կառվարենց; Երվանդ Երկանյան; Մարտին Մազմանյան:
2) Արա Պարթևյան; Ստեփան Բաբաթորոսյան; Նարինե Զարիֆյան; Երվանդ Սահառունի:
3) Սոֆա Ազնաուրյան; Գեղունի Չթչյան; Հարո Ստեփանյան; Տիգրան Չուխաջյան:
4) Նիկոլ Գալանտերյան; Շառլ Ազնավուր; Ալան Հավհաննես; Բարսեղ Կանաչյան:

36 **Նշել «Գարուն ա» ժողովրդական երգի Կոմիտասի խմբերգային մշակման մեջ կիրառված բազմաձայնության տեսակը:**

1) հոմոֆոն;
2) պոլիֆոն;
3) հոմոֆոն-հարմոնիկ;
4) հոմոֆոն-պոլիֆոն:

37 **Նշել ճիշտ տողը, որտեղ հայ դիրիժորների անուններ են:**

1) Էդգար Հովհաննիսյան, Ալեքսանդր Հարությունյան, Գևորգ Արմենյան, Արմեն Տիգրանյան:
2) Նիկողայոս Տիգրանյան, Հարո Ստեփանյան, Գրիգոր Եղիազարյան, Աշոտ Սաթյան:
3) Միքայել Մալունցյան, Դավիթ Խանջյան, Գևորգ Բուդաղյան, Ռուբեն Ասատրյան:
4) Կարեն Դուրգարյան, Ստեփան Բաբաթորոսյան, Ստեփան Լուսիկյան, Ռոբերտ Պետրոսյան:

38 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր խմբերգերի հեղինակը Ռոբերտ Պետրոսյանն է:**

1) «Մեր հին ու նոր Երևան», «Արաքսն ասաց», «Խաչքար», «Մեր սուրբ զոհեր»:
2) «Իմ ուսուցիչ», «Եղբայր եմք մենք», «Աղջկա երգը», «Ուրախության ձոներգ»:
3) «Գարնանային», «Փշատենի փոքրիկ ծառ», «Այբ, բեն, գիմ», «Գարուն եկավ»:
4) «Ծիտիկի սերը»; «Վասպուրական»; «Անձրևի երգը»; «Մուսա լեռան կարոտը»:

39 **Նշել ճիշտ տողը, որտեղ հայ նշանավոր օպերային երգիչների անուններ են:**

1) Նար Հովհաննիսյան; Գոհար Գալաչյան; Ռազմիկ Ամյան; Ալլա Լևոնյան :
2) Գոհար Գասպարյան;Մարիետա Անտոնյան; Զարուհի Բաբայան; Արսեն Գրիգորյան:
3) Պավել Լիսիցյան; Հայկանուշ Դանիելյան; Տաթևիկ Սազանդարյան; Ավագ Պետրոսյան:
4) Ռոբերտ Բաբուրյան; Բարսեղ Թումանյան; Վարդուհի Վարդանյան; Վարդան Բաղալյան:

40 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երաժշտական ստեղծագործությունների գրական տեքստի հեղինակը Պարույր Սևակն է:**

1) Էդգար Հովհաննիսյան «Հայաստան»; Ռոբերտ Պետրոսյան «Հայաստան» Արեգ Լուսինյան «Զանգն առաջին»; Մելիք Մավիսակալյան «Ջան, Հայաստան»:
2) Էդգար Հովհաննիսյան «Էրեբունի-Երևան»; Գեղունի Չթչյան «Անձրևի երգը»; Ալեքսանդր Դոլուխանյան «Երևանի գիշերները»; Արամ Խաչատրյան «Գարուն Երևան»:
3) Էդգար Հովհաննիսյան «Հայաստան»; Էդգար Հովհաննիսյան «Էրեբունի-Երևան»;
   Հարո Ստեփանյան «Անլռելի զանգակատուն» օրատորիա; Էդգար Հովհաննիսյան «Սարդարապատ»:
4) Էդգար Հովհաննիսյան «Սարդարապատ»; Ռոբերտ Պետրոսյան «Պատգամ որդուս»; Արեգ Լուսինյան «Իմ ուսուցիչ»; Առնո Բաբաջանյան «Մեր սիրելի Երևան»:

41 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր ստեղծագործությունների հեղինակը Արտեմի Այվազյանն է:**

1) «Աղջկա երգը»; «Հայկական ռապսոդիա»; «Հայաստան»; «Կարինե»:
2) «Աղջկա երգը»; «Հեքիաթային ճանապարհ»; «Արևիկ»; «Էրեբունի-Երևան»:
3) «Հայաստան»; «Իմ Երևան»; «Իմ ուսուցիչ»; «Միշտ առույգ»:
4) «Կարինե»; «Վերադարձի երգ»; «Արջի վիշտը»; «Դպրոցի ճամփան»:

42 **Նշել ճիշտ տողը, որտեղ բոլոր երգերի հեղինակը Արեգ Լուսինյանն է:**

1) «Բարձրիկ Հայաստան»; «Ուղիղ կարգով»; «Պատգամ որդուս»; «Պսակ-պսակ»:
2) «Ողջույն ուսուցչին»; «Նոր տարվա երգ-պար»; «Զանգն առաջին»; «Բարձրիկ Հայաստան»:
3) «Ողջույն ուսուցչին»; «Զանգն առաջին»; «Երևանի գիշերները»; «Անձրևի երգը»:
4) «Խուտուտ-մուտուտ»; «Աշուն»; «Երգ ձյունանուշիկի և ձմեռ պապիկի մասին»; «Ծիտիկի սերը»:

43 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի:



1) Մոցարտ Սիմֆոնիա թ.40
2) Մենդելսոն «Երգ առանց խոսքի»
3) Շոպեն Պոլոնեզ
4) Գլինկա «Կամարինյան»

44 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը ըստ նոտագրված օրինակի:



1) Շոպեն «Նոկտյուրն»
2) Չայկովսկի «Փաթիլների պարը»
3) Չայկովսկի «Ծաղիկների վալսը»
4) Յ.Շտրաուս «Վալս»

45 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի:



1) Ռիմսկի-Կորսակով՝ «Շահարազադե»
2) Մենդելսոն՝ «Վենետիկի գոնդոլավարի երգը»
3) Մոցարտ՝ «Օրորոցային»
4) Շոպեն՝ «Նոկտյուրն»

46 Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի:



1) Մոցարտ «Փոքրիկ գիշերային սերենադ»
2) Սվիրիդով «Տրոյկա»
3) Չայկովսկի «Սերենադ»
4) Բիզե Նախերգանք «Կարմեն» օպերայից

47 **Ընտրել երաժշտական ստեղծագործության հեղինակին և ստեղծագործությունը՝ ըստ նոտագրված օրինակի:**



1) Ռիմսկի-Կորսակով՝ «Շահարազադե»
2) Գերշվին՝ Ռապսոդիա բլյուզի ոճով
3) Գրիգ՝ «Անիտրայի պարը»
4) Մուսորգսկի՝ «Պատկերներ ցուցահանդեսից»

48 **Նշել ճիշտ տողը, որտեղ նշված են «Հովիվ» հայկական ժողովրդական երգի ձայնակարգի տոնիկան և օժանդակ հենակետը:**



1) սի. մի
2) սի, ռե
3) դո, մի
4) դո,ռե:

49 **Որոշել «Հանի՛կ նայ» հայկական ժողովրդական երգի ժանրը:**



1) Պատմական
2) պանդխտության
3) պարերգ
4) աշխատանքային

50 Որոշել Ք. Կարա-Մուրզայի մշակմամբ «Լեպհո՛, լե՛, լե՛» ժողովրդական երգի ձևը:



1) միամաս,
2) երկմաս,
3) եռամաս,
4) ռոնդո:

51 Որոշել Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայի «Տղամարդկանց քայլերգի» ձևը:



1) միամաս
2) երկմաս
3) եռամաս
4) ռոնդո

52 Ո՞ր երգն է նոտագրված:



1) «Շողեր ջան»;
2) «Իմ չինարի յարը»;
3) «Սոնա յար»;
4) «Սարեն ելավ»:

53 «Շողեր ջան» ժողովրդական երգի լադի (ձայնակարգի) ո՞ր ձայնաստիճանն է ալտերացված:



1) լա;
2) սի բեմոլ;
3) սի բեկար;
4) դո:

54 Որոշել «Հո՛յ, Նազան» ժողովրդական երգի լադը (ձայնակարգը):



1) էոլական;
2) իոնական;
3) փռյուգիական;
4) դորիական:

55 Նշել երկու տարբերակները, որտեղ կառուցված են միայն մաքուր կվինտա ինտերվալներ դեպի վեր:

1) ռե-լա բեմոլ, սի բեմոլ -ֆա, մի բեմոլ -լա բեմոլ
2) սի բեմոլ -ֆա, դո դիեզ-սո դիեզ, սի-ֆա դիեզ
3) լա-մի, դո-սո, ֆա դիեզ-դո դիեզ
4) ֆա դիեզ-դո, սի-ֆա, լա-մի բեմոլ
5) սի-ֆա, ռե բեմոլ -լա, դո- սո

56 **Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու ճիշտ տարբերակները՝ հաշվի առնելով ինտերվալների տոնային և աստիճանային մեծությունը:**

1) մաք.5 + մ.2 = փքg.7
2) մաք.4 +մ.3 = մ.6
3) մծg.2 + փքg.5 = փ.6
4) մծg.4 + մ.3 = փ.7
5) փ.3 + փ.3 = մծg.4

57 **Ընտրել տրված լուծված երաժշտամաթեմատիկական օրինակներից երկու սխալ տարբերակները՝ հաշվի առնելով ինտերվալների տոնային և աստիճանային մեծությունը:**

1) մծg.5 – փ.3 = մաք.4
2) փ.7 - մաք.5 = փ.3
3) մծg.4 - մծg.2 = մ.3
4) մ.7 - փ.3 = փ.6
5) փքg.7- մաք.4 = փ.3

58 **Նշել երկու գործիքային ժանրեր:**

1) Օպերա
2) Կանտատ
3) Ֆանտազիա
4) Օրատորիա
5) Տոկատ

59 **Նշել երկու ճիշտ տողերը, որտեղ վոկալ երաժշտության ժանրերն են:**

1) Ռոմանս, երգ, օրատորիա
2) Արիա, վոկալիզ, արիոզո
3) Երգ, սյուիտ, սաղմոս
4) Սպիրիչուել, մադրիգալ, երգ
5) Կանտատ, ռոմանս, բալլադ

60 **Նշել երկու կոմպոզիտորների, ովքեր ստեղծագործել են նաև բալետային ժանրում:**

1) Շոպեն
2) Գլինկա
3) Շուբերտ
4) Բեթհովեն
5) Մոցարտ

61 **Նշել երկու բազմաձայն ստեղծագործություններ, որոնցում թեման անցնում է բոլոր ձայներում:**

1) Խորալ
2) Սաղմոս
3) Ֆուգա
4) Կանոն
5) Ֆուգատո

62 **Նշել երկու լեհական ժողովրդական պարեր:**

1) Պոլկա
2) Տրեպակ
3) Մազուրկա
4) Մենուետ
5) Պոլոնեզ

63 **Նշել Բեթհովենի գրչին պատկանող երկու ստեղծագործություններ:**

1) Ռեքվիեմ
2) «Պրոմեթևսի արարչությունը»
3) Սերենադ
4) «Ֆիդելիո»
5) «Օզեի մահը»

64 **Նշել ժամանակային երկու արվեստ:**

1) Կերպարվեստ
2) Երաժշտություն
3) Ճարտարապետություն
4) Գրականություն
5) Քանդակագործություն

65 **Նշել Ռիմսկի-Կորսակովի երկու օպերա:**

1) «Ոսկե աքաղաղը»
2) «Ռուսլան և Լյուդմիլա»
3) «Դոն Ժուան»
4) «Զյունանուշ»
5) «Կախարդական սրինգ»

66 **Համապատասխանեցնել երաժշտական տերմիններն իրենց սահմանումներին:**

Ա) տակտ
Բ) տեմպ
Գ) ռիթմ
Դ) մեղեդի

1) իրար հաջորդող տարբեր տևողությունների փոխհարաբերությունը,
2) մի շեշտից մյուսն ընկած հատվածը,
3) կայուն և անկայուն աստիճանների փոխհարաբերությունը,
4) երկու հնչյունների միջև ընկած հեռավորությունը,
5) երաժշտության մեջ դանդաղ, միջին և արագ ընթացքը,
6) միաձայն արտահայտված երաժշտական միտքը:

Ա	Բ	Գ	Դ

67 **Համապատասխանեցնել ստեղծագործությունը՝ հեղինակած կոմպոզիտորին:**

Ա) Դաշնամուրային ռապսոդիա
Բ) Հունգարական ռապսոդիա
Գ) Ռապսոդիա բլուզի ոճով
Դ) Հայկական ռապսոդիա

1) Իպոլիտով-Իվանով
2) Լիստ
3) Բրամս
4) Գերշվին
5) Շոպեն
6) Շտոգարենկո

Ա	Բ	Գ	Դ

68 **Համապատասխանեցնել կոմպոզիտորների ազգությունը:**

Ա) Շոպեն
Բ) Մենդելսոն
Գ) Բիզե
Դ) Մուսորգսկի

1) Ռուս
2) Ֆրանսիացի
3) Գերմանացի
4) Լեհ
5) Ավստրիացի
6) Հունգարացի

Ա	Բ	Գ	Դ

69 **Համապատասխանեցնել օպերաները հեղինակած կոմպոզիտորին:**

Ա) «Հեքիաթ Սալթան թագավորի մասին»
Բ) «Պորգի և Բես»
Գ) «Ռուսլան և Լյուդմիլա»
Դ) «Հսկան»

1) Գլինկա
2) Պրոկոֆև
3) Գերշվին
4) Ռիմսկի-Կորսակով
5) Մուսորգսկի
6) Մոցարտ

Ա	Բ	Գ	Դ

70 **Համապատասխանեցնել կոմպոզիտորներին և նրանց ծննդավայրը:**

Ա) Մոցարտ
Բ) Բախ
Գ) Բեթհովեն
Դ) Շտրաուս

1) Վիեննա
2) Զալցբուրգ
3) Այզենախ
4) Բոնն
5) Լայպցիգ
6) Բեռլին

Ա	Բ	Գ	Դ

71 **Ի՞նչ նվագարանների են տիրապետել նշված ջազային երաժիշտները:**

Ա) Բենի Գուդմեն
Բ) Գլեն Միլլեր
Գ) Դյուկ Էլինգթոն
Դ) Պոլ Մոտյան

1) Դաշնամուր
2) Կլառնետ
3) Տրոմբոն
4) Թմբուկ
5) Շեփոր
6) Սաքսաֆոն

Ա	Բ	Գ	Դ

72 **Համապատասխանեցնել գրական ստեղծագործությունները հեղինակներին:**

Ա) «Հեքիաթ Սալթան թագավորի մասին»
Բ) «Ձյունանուշ»
Գ) «Դիմակահանդես»
Դ) «Պեր Գյունտ»

1) Իբսեն
2) Պուշկին
3) Մուլլեր
4) Լերմոնտով
5) Օստրովսկի
6) Ռելշտաբ

Ա	Բ	Գ	Դ